Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2025-2026 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
10 – րդ դասարան

**1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ** 2միավոր

ա. ՀՀ տարածքում տիրապետողը բարեխառն կլիմայի վերընթաց տիպերն են:
բ. ՀՀ տարածքում չափավոր շոգ կլիմայի տիպը հանդիպում է հիմնականում Տավուշի և Սյունիքի մարզերում:
գ. ՀՀ տարածքում միագումար ճառագայթման առավելագույնը գրանցվում է Արմավիրի մարզում:
դ. ՀՀ հարավ-արևելքում արևափայլն ավելի փոքր է, քան հյուսիս-արևելքում:
ե. Վերջին հարյուրամյակում ամենաշատ զոհերի հանգեցրած բնական աղետը ջրհեղեղներն են:
զ. Ջրհեղեղներից մահացածների քանակը վերջին հարյուրամյակում ունի աճի միտում:
է. Վերջին հարուրամյակում ջրհեղեղներից ամենաշատ զոհերը գրանցվել են Բանգլադեշում:
ը. Ջրհեղեղների հաճախականությունը ունի աճի միտում

**2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը** 1միավոր

ա. Դարավանդ բ. անեմոմետր

**3. Նկարագրով որոշել պետությունը** 1միավոր

Բնակչությամբ գերխոշոր այդ հանրապետության մայրաքաղաքը կառուցվել է լճագետային նստվածքների վրա և ինտենսիվ կառուցապատման արդյունքում տարեկան մինչև 50սմ նստում է: Լեռնային դիրքադրության շնորհիվ էլ անընդհատ ենթարկվում է ջերմաստիճանային ինվերսիաների, ինչն էլ ավելի է վատթարացնում մթնոլորտի աղտոտվածության պատկերը:

**4. Ինչպե՞ս են կոչվում.**

**ա.** Էլեկտրակայանները, որոնք ընդերքի ջերմությունը կամ դուրս եկող գոլորշին փոխակերպում են էլեկտրաէներգիայի 1միավոր

**բ.** Գյուղատնտեսական գիտության նվաճումների ու տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ կարճ ժամկետում բերքի քանակի կտրուկ ավելացումը 1միավոր

**5. Խնդիրներ**

**ա.** Ճանապարհորդը շարժվեց հյուսիսային արևադարձից այն օրը, երբ հյուսիսային բևեռում 12ժամ ցերեկ էր, 12 ժամ գիշեր, իսկ դրա նախորդ օրը արևը չէր ծագել: Ապա շարժվեց հարավ 5կմ/ժամ միջին արագությամբ: 240կմ անցնելուց հետո հասավ վերջնակետին: Ամսի քանիսին շարժվեց ճանապարհորդը և ամսի քանիսին հասավ վերջնակետ: 1միավոր

**բ.** Ելնելով տրանսպորտի տարբեր տեսակների ցուցանիշներից՝ կազմեք բեռնաշրջանառության շրջանաձև տրամագիրը 1միավոր

| | Տրանսպորտի տեսակ | | | |
|---|---|---|---|---|
| Ցուցանիշ | Երկաթուղային | Ավտոմոբիլային | Խողովակաշարային | Օդային |
| Բեռնափոխադրումների ծավալ (մլն տ) | 20 | 80 | 100 | 10 |
| Տեղափոխման միջին հեռավորություն (կմ) | 150 | 25 | 150 | 500 |

**6. Ելնելով ՀՀ մարզերի և Երևանի համար բերված թվային ցուցանիշներից՝ կցված ուրվագծային քարտեզը վերածեք քարտեզագրամի, որն արտահայտում է բնակչության խտությունը՝ պահպանելով քարտեզի կազմման պահանջները (2միավոր) և պատասխանեք հարցերին:**

| Ցուցանիշ | Մարզեր և Երևան | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Երևան | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց Ձոր | Տավուշ |
| Տարածք (կմ²) | 2753 | 2096 | 1231 | 5348 | 223 | 3799 | 2076 | 2680 | 4506 | 2310 | 2704 |
| Բնակչության թիվ (հզ մարդ) | 136 | 268 | 268 | 216 | 1141 | 229 | 293 | 242 | 117 | 49 | 118 |

**ա.** ՀՀ քանի մարզում է բնակչության խտությունը հանրապետության միջին խտությունից ավելի բարձր (0.5միավոր)
**բ.** Ո՞ր մարզի բնակչությունն է ամենաշատը ավելացել վերջին հնգամյակում (0.5միավոր):

**7.** Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-տուր կատարելու նպատակով զբոսաշրջիկը ժամանել է Զվարթնոց միջազգային օդանավակայան: Թվարկեք ՀՀ տարածքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի նյութական մշակութային ժառանգության ցանկացած չորս օբյեկտ-հուշարձան ըստ Զվարթնոցի օդանավակայանից ունեցած հեռավորության՝ հաշվի չառնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից դրանց խմբավորումները: 1միավոր

**8. Բացատրել՝ հարցադրումներից յուրաքանչյուրի համար ներկայացնելով երկու հիմնավոր պատճառ**
**ա.** Վերջին տարիներին աշխարհում էականորեն մեծացել են գյուղական և էկոտուրիզմի ծավալները: Ի՞նչ հիմնական պատճառներ ունի միտումը: 1 միավոր
**բ.** Ինդոնեզիան վերջին տարիներին ակտիվորեն մեծացնում է ռեսուրսների ազգայնացման քաղաքականությունը, որի շրջանակներում ընդհանրապես արգելվել է լիթիումի արտահանումը: Ի՞նչ տնտեսական նպատակ է հետապնդում Ինդոնեզիան: 1միավոր

**9. Դիտարկեք $CO_2$ արտանետում/շունչ - ՀՆԱ/շունչ կապի տրամագիրը և պատասխանեք հարցերին**




Data source: Global Carbon Budget (2025); Population based on various sources (2024); Bolt and van Zanden – Maddison Project Database 2023
OurWorldinData.org/co2-and-greenhouse-gas-emissions | CC BY

**ա.** Ինչպիսի՞ կոռելյացիա է առկա երկու երևույթների միջև Ասիայում (0.5միավոր) և ինչպիսի՞՝ Եվրոպայում (0.5միավոր)
**բ.** Ո՞ր աշխարհամասում է այս երկու փոփոխականների միջև կախվածությունն ամենաուժեղը (0.5միավոր) և ինչպե՞ս է փոխվում կոռելյացիան ըստ ՀՆԱ/շունչ ցուցանիշի աճի (0.5միավոր)

**10. Նշել պատասխանը և հիմնավորել**
**ա.** Տաք ջերմային գոտու սահմաններում ո՞ր աշխարհագրական լայնություններում չեն ձևավորվում պտտահողմեր և ինչու՞ 1միավոր
**բ.** Ո՞ր կիսագնդի բևեռամերձ գոտիներում են ծովերի սառցային երևույթներն ավելի երկար դրսևորվում տարվա ընթացքում և ինչու՞ 1միավոր

11. Համապատասխանեցնել ջրօգտագործման Ա-ից Դ տրամագրերը քարտեզում թվերով նշված երկրներին (օր.՝ Ա-1)







Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան